ՀՀԿԳՆ հետ N - Ա-6/18-12 պայմանագրով իրականացվող «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի 2012թ.
հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվություն

1. Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներին համապատասխան կրթահամալիրում իրականացվող «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիահանրակրթություն» պետական այլընտրանքային (հեղինակային) կրթական ծրագրի չափորոշչի, ըստ չափորոշչի՝ ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման համակարգի մշակում

Դասավանդողների ամենշաբաթյա մեթոդական պարապմունքներում քննարկվել են առարկայական ծրագրերի իրականացման խնդիրները և արդյունքները, ծրագրերում սովորողների ուսումնական աշխատանքի արդյունքների գնահատման վերամշակման ուղղությունները: Մշակվել և իրականացվել են կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված ուսումնական նախագծեր: Լրամշակվել են ուսումնական պլաններով նախատեսված ձմեռային ուսումնական ճամբարների կազմակերպման կարգն ու բովանդակությունը, քննարկվել են կրթության կազմակերպման մեջ առցանց և հեռավար ուսուցման, ուսումնական նախագծերի մշակման և իրականացման միջոցով ուսուցման ներդրման հնարավորությունները: Նախատեսվում է 2013թ. ծրագրային մշակումների արդյունքում հստակել մեդիահանրակրթության մեջ ուսումնական պարապմունքի և ուսումնական նախագծի սահմանումները: Դասագրքերի և ՏՀՏ շրջանառու հիմնադրամի միջոցով մինչև 2013թ. փետրվարը ձեռք բերվող 800 ուսումնական նեթբուքները կլուծեն սովորողների՝ սկսած 1-ին դասարանից, և դասավանդողների՝ ուսումնական պարապմունքին անհատական համակարգչով մասնակցության խնդիրը, կլրամշակվեն ուսումնական պարապմունքին և դրա արդյունավետության գնատատմանը ներկայացվող պահանջները:

2. Կրթահամալիրի, դպրոցի, դասարանի, խմբի, սովորողի ուսումնական գործունեության, ուսումնական պարապմունքի արդյունավետության գնահատման էլեկտրոնային համակարգի ամբողջացում, էլեկտրոնային մատենավարության ամբողջական ներդրում

Կրթահամալիրի տնօրենի հրամանով հաստատվել են էլեկտրոնային գնահատման միասնական մատյանները և դրանց վարման կարգերը՝ ըստ կրթական ծրագրերի՝ սկսած նախադպրոցական կրթության խմբերից: Դրանց փորձարկման արդյունքները կրթահամալիրի գնահատման ծառայության կողմից կներկայացվի Հանրակրթական Դիջիթեք 2013 ստուգատեսում, լրամշակում կարվի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի համար:

3. Մեդիահանրակրթության սովորողների, դասավանդողների առողջության պահպանման ծրագրի մշակում և ներդրում

Կրթահամալիրի առողջագիտության կենտրոնը առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության հետ քննարկել է սովորողի առողջության պահպանման՝ օրենսդրությամբ նախատեսված չափորոշիչները և ձեռք է բերել նրանց հետ նոր չափորոշիչների մշակման պայմանավորվածություն: Հաշվետու շրջանում կրթահամալիրի դասավանդողները «Delta Clinic» բժշկական կենտրոնում անցել են լյարդի ֆունկցիոնալ ստուգում, վահանագեղձի, ողնաշարի հետազոտություն:

4. Համացանցում դասավանդողների և սովորողների անհատական էջերի (բլոգների) գործարկում՝ որպես ուսումնական փարածք. սովորողների հեռավար ուսուցում: Ուսումնական նոր կայքի, ենթակայքերի, էլեկտրոնային պարբերականների (Լուսաստղ, ART-mskh) ստեղծում

Կրթահամալիրի տնօրենի հրամանով կրթահամալիրի հանրակրթական դպրոցների և քոլեջի սովորողները՝ սկսած 1-ին դասարանից՝ պարտադիր վարում են իրենց էլփոստի օրագրերը, սկսած 7-րդ դասարանից՝ ստեղծում և վարում են անձնական բլոգներ և իրենց ուսումնական աշխատանքը ներկայացնում այնտեղ. բլոգների հղումները տեղադրված են mskh.am-ի ենթակայքերում: Երկրորդ կիսամյակից բլոգավարությունը կդառնա նաև 5-6-րդ դասարանցու պարտադիր ուսումնական աշխատանք: Հանրակրթական Դիջիթեք 2013 ստուգատեսի մրցանակային անվանակարգը նաև անհատական կայքն ու բլոգն է, որ հնարավորություն կտա ամփոփելու ուսումնական բլոգավարության կրթահամալիրային և հանրապետական փորձը, այդ ուղղությամբ նոր մշակումներ անելու:

Կրթահամալիրի պաշտոնական կայքը՝ mskh.am-ը՝ իր բոլոր ենթակայքերով, ամսագրերով արդյունավետ աշխատել է, ստեղծվել են նոր ենթակայքեր՝ itlab.mskh.am-ը, որը որպես մեդիահանրակթության կազմակերպչի գործընկեր, ապահովում է նոր ծրագրերի որոնման, տարածման, յուրացման աշխատանքները, edudigitech.mskh.am-ը՝ որպես Հանրակրթական Դիջիթեք 2013-ի կազմակերպման, արդյունքների ամփոփման և ցուցադրման վիրտուալ միջավայր: Մյուս ենթակայքերում արվել են բովանդակային լրացումներ: mskh.am-ը, info.mskh լրատվականը, «Լուսաստղ» պատանեկան ամսագիրը արձագանքել են ոչ միայն կրթահամալիրում տեղի ունեցող իրադարձություններին, այլ նաև իրականացրել են կրթական-մշակութային նախագծեր: mskh.am-ը հաշվետու շրջանում օրական ունեցել 5000-ի չափ մուտք, 25000 էջի դիտում: mskh.am-ում հաջողությամբ շարունակվում է ռադիո.mskh.am նախագիծը. ենթակայքերը բացել են իրենց ռադիոհաղորդման էջերը, իրականացվում են այլ նախագծեր: 2013թ. ամանորյա և սուրբծննդյան տոներին սկսվեց առցանց ընդհանուր պարապմունք ուսումնական նախագիծը: 2012թ. հունվարի 31-ի դրությամբ կայքում (առանց ենթակայքերի) հրապարակված է 25645 էջ:

5. Կրթահամալիրում իրականացվող հանրակրթական, արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերը, որպես տեխնոլոգիական կրթության (կարողությունների ձևավորում և զարգացում) տարբեր մակարդակներ. ուսումնական կարգերի, ծրագրերի լրամշակում ՀՀ օրենքով կրթության պետական սկզբունքների ապահովման նպատակով

Տեխնոլոգիական կրթության կազմակերպման և ըստ կրթական աստիճանների տեխնոլոգիական կարողությունների զարգացման հաշվետվություն էին կրթահամալիրի տոնի, ամանորյա և սուրբծննդյան տոնախմբությունների նախապատրաստման և կազմակերպման աշխատանքները: Կրթահամալիրի դիզայն-կերպարվեստի և տեխնոլոգիայի լաբորատորիաներում արվեցին ուսումնական միջավայրի ձևավորման-կազմակերպման նոր մշակումներ: «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի աջակցությամբ կրթահամալիրի բիզնես կենտրոնը կազմակերպեց կրթահամալիրի սովորողների ուսումնական արդյունքների ցուցահանդես-վաճառքներ: Հաստատված դասացուցակով, գործող արհեստանոցներում փորձարկվում են մասնագիտական ուսուցման նոր մոդուլները: Արհեստագործական ավագ դպրոցի սովորողները մշակում են մասնագիտական կրթությանն առնչվող ուսումնական նախագծեր, որոնք իրականացնում են կրթահամալիրում և կրթահամալիրից դուրս. մասնավորապես «Ավանդական խոհանոց» նախագիծն իրականացվում է հանրապետության մարզերում. սովորողները արդեն եղել են Գեղարքունիքում, Արմավիրում, Վայքում:

Կրթահամալիրի տարբեր կրթական ծրագրերի սովորողների տեխնոլոգիական հմտությունների արդյունքները կրթական օբյեկտների ձևավորումներն են (կրթահամալիրի տոնի, ամանորի և Սուրբ ծննդյան), տոնական ցուցադրությունները, հյուրասիրությունները, ելույթները:

Լիցենզավորման մասին ՀՀ օրենքով որոշված կարգով ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաշվետու շրջանում հաստատվել է կրթահամալիրի քոլեջում մասնագիտական կրթության յոթ նոր ծրագրերի իրականացման իրավունք:

6. «Կրթության կազմակերպումը ավագ դպրոցում» գիտափորձի մշակում և ներդրում, այդ թվում՝ անհատական ուսուցման կազմակերպում, կրեդիտային համակարգի մշակում, մասնագիտական փորձառության կազմակերպում, հետազոտական նախագծերի և ինքնակրթության ծրագրերի մշակում

Կրթահամալիրի ավագ դպրոցներում ուսուցումը կազմակերպվել է անհատական ուսումնական պլաններով և անհատական դասացուցակներով, որտեղ արտացոլված են ընդհանուր և սովորողի ընտրությամբ դասընթացների ուսումնական պարապմունքները, սովորողների նախասիրությունների զարգացման ակումբների ուսումնական պարապմունքները. ուսումնական այցելությունները, ճամփորդություններն ու արշավները, մեդիաօլիմպիադաների, ստուգատեսների (այդ թվում՝ ուսումնական արձակուրդ, «Սեբաստացու օրեր. կրթահամալիրի տոն», «Աշուն» մեդիաօլիմպիադա),

ուսումնահետազոտական ճամբարների, հասարակական նախագծերի մասնակցությունը հաշվառվում են էլեկտրոնային մատյանում: Դասավանդողների ամենշաբաթյա սեմինարներին քննարկվել են ընթացիկ խնդիրները, սովորողների ուսումնական աշխատանքի արդյունքների գնահատման կրեդիտային համակարգի հարցեր: 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքները կներկայացվեն Հանրակրթական Դիտիթեք 2013-ի բաց պարապմունքների ժամանակ: Արդյունքներն ամփոփելով՝ 2013-2014 ուսումնական տարվա համար ուսումնական պլանները, ուսուցման կազմակերպման և արդյունքների գնահատման կարգերը, դասընթացների ծրագրերը կլրացվեն և կփոփոխվեն:

7. Կրտսեր դպրոց-պարտեզում իրականացվող «Իմացումի հրճվանք» ծրագրի բովանդակության բազմաձևության (լեզվագործունեություն, այդ թվում՝ օտար լեզուներ, թվաբանական, բնագիտական-բնապահպանական, տեխնոլոգիական, այդ թվում՝ մեդիա, երաժշտական, այդ թվում՝ պար և նվագարաններ, մարզական, այդ թվում՝ մարմնամարզություն և լող, թատերական) ապահովում՝ ծրագիրը կրող ուսուցչի (դաստիարակի և դասվարի) կարողությունների զարգացման և նրա աշխատանքի կազմակերպման միջոցով:

Հաշվետու շրջանում «Իմացումի հրճվանք» կրթական ծրագրով մշակվել և իրականացվել են աշնանային ուսումնական արձակուրդի, «Աշուն» մեդիաօլիմպիադայի, «Սեբաստացու օրեր. կրթահամալիրի տոնի» և ամանորյա ուսումնական դասարանական և ընտանեկան նախագծերը: «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ծրագրում ներառվել են ուսումնական պարապմունքներ աստղաադիտարանում, դիտումներ աստղադիտակով: Կրտսեր դպրոցի սովորողները մասնակցել են Բնապահպանության նախարարության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի արգելոցներ» նախագծին, եղել են Էրեբունու և Ջրվեժի արգելոցներում: Դասվարների ամենշաբաթյա ուսումնական պարապմունքների ժամանակ քննարկվել են մասնագիտական զարգացման աշխատանքի, յուրացված հմտությունները իրար և սովորողներին փոխանցելու խնդիրները, կազմակերպվել է ՏՏ և տեխնոլոգիական հմտությունների զարգացում:

8. Գործընկեր կազմակերպությունների (ՁԻՀ, ԻՏՁՄ, Յունիքոմփ, Ֆիրմա Ալֆա, Մայքրոսոֆթ-ԱՐԷՅ, Նորք, ԿՏԱԿ, Սինոփսիս) աջակցությամբ «Նոթբուքն ինձ դասընկեր», «Էլեկտրոնային գրատախտակը, պրոյեկտորը, էլեկտրոնային գրիչները հանրակրթական դասարանում», «Ռոբոտիքս», «Էլեկտրոնային կրթահամալիր-կրթական միջավայր» ծրագրերի զարգացում

Հաշվետու շրջանում կրթահամալիրը համագործակցության պայմանագրեր է կնքել նաև Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հետ: «Սեբաստացու օրեր կրթահամալիրում» կրթահամալիրի տոնի շրջանակում բացվեց կրթահամալիրի

հանրակրթական տեխնոպարկը: Գործընկեր հաստատությունների մասնագետների աջակցությամբ կմշակվեն տեխնոպարկում իրականացվող ուսումնական նախագծեր:

Յունիքոմփի մասնագետների աջակցությամբ ավարտվեց կրթահամալիրի նոր սերվերի գործարկման աշխատանքը:

Կրթահամալիրի երկու կրթական օբյեկտներում՝ Կենտրոնում և Մայր դպրոցում ներդրվեց և փորձարկվեց Արմինկոյի կապը: Այս կապը շատ ավելի անխափան է գործում հոսթերի նույնիսկ շատ մեծ քանակության դեպքում, կապի այս ճարտարապետությամբ թրաֆիքը ավելի ռացիոնալ է օգտագործվում՝ շենքի չօգտագործած հոսքը գործում է մյուս շենքի օգտին (արագության սահմանափակումն արվում է մի ընդհանուր կետից, իսկ բաշխումը դինամիկ է): Քանի որ Կենտրոնում (մեդիակենտրոնում) գտնվող սերվերի և Մայր դպրոցի միջև ստեղծվեց համարյա ուղիղ (մեկ գեյթուեյով) օպտիկական կապ, mskh.am կայքի աշխատանքը Մայր դպրոցում մի քանի անգամ ավելի որակյալ ու հուսալի դարձավ: Այս դեպքում եթե ինտերնետի խափանման ժամանակ պատճառը լինի Հարավարևմտյան զանգվածից դուրս, կայքը մայր դպրոցից հասանելի կլինի: Քանի որ մասնաճյուղերում հանրակրթական դասընթացների ժամանակ ակտիվորեն օգտագործվում են գրադարանի ենթակայքում եղած էլեկտրոնային գրքերը, մեզ անհրաժեշտ է մյուս մասնաշենքերն էլ միացնել այս ցանցին: Այդ դեպքում շենքերից յուրաքանչյուրը կունենա իր ռեալ այփին, կկարողանանք կազմակերպել ֆայլային արխիվներ, սերվերներ յուրաքանչյուր դպրոցում և այդ ֆայլերի փոխանակում շենքերի միջև: Դրա համար կրթահամալիրը դիմում է պետական պատվերով կրթական հաստատությունների համակարգչային և ինտերտետ կապի ծառայությունները կազմակերպող ԿՏԱԿ-ին, որ կա՛մ փոխի համացանցի կապի տեսակն ու որակը, կա՛մ կրթահամալիրի բաժին ֆինանսավորումն ուղղվի այն փրովայդերին, որի հետ հիմա համագործակցում է կրթահամալիրը և բերում մատչելի և որակյալ կապ:

Կրթահամալիրը գործընկեր ՏՏ հաստատությունների հետ նախապատրաստում է Հանրակրթական Դիջիթեք 2013-ը. Ֆիրմա Ալֆայի կրթահամալիրի թվային միջոցները ստուգվում և բերվում են աշխատանքային վիճակի:

9. Գործընկեր միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ էկոլոգիական կրթության ծրագրերի զարգացում, նախագծերի մշակում և իրականացում

Բնապահպանության նախարարությունում հաստատված համագործակցային «Հայաստանի արգելոցները» նախագծով կրթահամալիրի կրտսեր դպրոցների սովորողները եղել են Ջրվեժի անտառպարկում, «Էրեբունի» պետական արգելոցում: Գեղարվեստի ավագ դպրոցի սովորողներն իրականացրել են առաջին պլեները Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում:

Կրթահամալիրի էկոլոգիական ակումբը հայտարարել է Հանրակրթական 3-րդ ամենամյա էկոտուրի մասին, որը կլինի 2013թ. ապրիլին: Սովորողների, դասավանդողների խմբերը մշակում են էկոլոգիական-հայրենագիտական նախագծեր. մասնավորապես

նոյեմբեր-դեկտեմբերին «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի աջակցությամբ իրականացվեց էկոտոպրակների արտադրության նախագիծը:

ACE&MSKH բնապահպանական ակումբը համագործակցում է Ամերիկյան համալսարանի Ակոբյան բնապահպանական կենտրոնի հետ, համալսարանում մասնակցում դասախոսությունների, հանդիպումների, ուսումնական ճամփորդությունների միջոցով ուսումնասիրում Հայաստանի թռչունները: Իրականացվող աշխատանքները մանրամասն լուսաբանվում են սովորողների և ուսուցիչների բլոգներում, բնապահպան-հայրենագետների ակումբի բլոգում, mskh.am-ում:

10. Սովորողների և ուսուցիչների ընտրությամբ՝ վրացերենի, պարսկերենի, թուրքերենի ուսուցման միջոցով միջմշակութային հաղորդակցության զարգացում: Հետազոտական աշխատանքներում ուսուցիչների օտար լեզուներ, այդ թվում՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, իսպաներեն, կիրառելու հմտությունների զարգացում

ՀՀ և ՎՀ ԿԳ նախարարությունների հավանությանն արժանացած «Հայ-վրացական հանրակրթական կամուրջներ» ծրագրով կրթահամալիրի ավագ դպրոց-վարժարանի տերյանասեր սովորողների խումբը «Ուսումնական արձակուրդ» ստուգատեսի շրջանակում հոկտեմբերին չորս օրով հյուրընկալվել է Վրաստանում՝ Ջավախքի Գանձա գյուղում, կրթահամալիրում նոյեմբերին և դեկտեմբերին հյուրընկալվել են Գանձա գյուղի երկու դպրոցների պատվիրակությունները: Խմբերը ղեկավարել են տեղի վրացերենի ուսուցիչները, նրանց ընդունելությունը կրթահամալիրում կազմակեպել են վրացերենի ուսուցման խմբերի սովորողները: Վրաստանյան լրատվամիջոցները լուսաբանել են այցերը:

Լրամշակվել և մասնագիտական եզրակացությունների հետ նախարարություն է ներկայացվել թուրքերենի ծրագիրը: Կրթահամալիրի միջին, ավագ դպրոցներում սովորողների ընտրությամբ ձևավորվել են նաև արաբերենի ուսուցման խմբեր:

11. Ուսումնահայրենագիտական ճամփորդություններ, արշավախմբային գործունեություն

Հաշվետու շրջանում իրականացվել է 55 մեկօրյա այցելություն և հայրենագիտական ճամփորդություն, 12 բազմօրյա ճամփորդություն: Ճամփորդությունները կազմակերպվել են ուսումնական արձակուրդների, ուսումնական պլանով որոշված ուսումնական ճամբարների շրջանակում, շաբաթ և կիրակի օրերին, լուսաբանվել են mskh.am-ում:

12. Պարբերական մեդիաօլիմպիադաների և օլիմպիական ճամբարների, «Ուսումնական մեդիաթատրոն» ստուգատեսի, ամենամյա հանրակրթական DigiTec-ի, մեդիափառատոնի կազմակերպում

Իրականացվել են հոկտեմբերյան ստեղծագործական հավաքներ Արցախի Գանձասարում, Ստեփանավանի Դենդրոպարկում, Վայոց ձորում, Ջավախքում:

Ճամբարների կազմակերպմանը աջակցել են ՀՀ Պաշտպանության և տրանսպորտի նախարարությունները: Կրթահամալիրի սովորողների մեծ խումբը Վրաստանի Բակուրիանիում մասնակցել է հանդուրժողականության միջազգային ճամբարին:

«Աշուն» մեդիաօլիմպիադայի շրջանակում իրականացվել են կրթահամալիրի ուսումնական տոնացույցով որոշված բնագիտական-տեխիկական ստուգատեսներ՝ Վիկտոր Համբարձումյանի, Գրիգոր Գուրզադյանի օրեր, իրականացվել է «Պլեները որպես նկարիչ-լուսանկարիչ-դիզայներ սովորողների ուսուցման կազմակերպում» նախագիծը, որը պարբերական կլինի, կունենա նաև ձմեռային, գարնանային, ամառային փուլեր: Մեկնարկել է «Ձմեռ» մեդիաօլիմպիադան՝ որպես ուսումնական նախագծերի մրցույթ: Հատուկ ուշադրության է արժանի «Ձմեռ» մեդիաօլիմպիադայի շրջանակում մշակված և իրականացված «Ամանորյա, սուրբծննդյան ծես» ուսումնական նախագիծը: Նոյեմբեր-դեկտեմբերին կազմակերպվեց Հանրակրթական Դիջիթեք 2013-ի գաղափարի տարածման գովազդների մրցույթ:

«Դասարան-ուսումնական թատրոն» նախագծով ստեղծվել են նոր ուսումնական թատրոններ՝ «Գույն», «Պարադոքս», «Խառնաշփոթ», որոնք ձմեռային ուսումնական ճամբարի ընթացքում ներկայացրին իրենց առաջին ավարտուն աշխատանքները:

Մշակվում է սովորողների երգչախմբի, նրա ծրագրի և գործունեության կազմակերպման նորացման նախագիծ:

13. Սովորողների օժտվածության զարգացման ակումբների գործունեության կազմակերպումը որպես հեղինակային կրթական ծրագրով լրացուցիչ կրթություն («Տիեզերք», «Ռոբոտիքս», ծրագրավորողների, գիտակների, մշակութային, հայրենագետների, «Խաղարկային դատարան»), աստղացուցարանի նախագծի և գործունեության մշակում

Սովորողների օժտվածության զարգացման ակումբները Արցախի «Գանձասարում» արցախցի սովորողների հետ մասնակցեցին ամենամյա ստեղծագործական 2-րդ հավաքին, որի ժամանակ ներակումբային քննարկումներից բացի, կազմակերպվեցին «Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն», «Արցախի «Ասպետ» ճամբարը, որպես ռազմամարզական ակումբի կայացման մոդել» թեմաներով ընդհանուր քննարկումներ, «Տիեզերք» ակումբի՝ Վանք գյուղի դպրոցում տեղադրված աստղացուցարանում ֆիլմերի դիտումներին մասնակցեցին գյուղի և ճամբարի սովորողները՝ սկսած 1-ին դասարանից, աստղադիտակով կազմակերպվեցին գիշերային դիտումներ: «Ռոբոտիքս» ակումբի սովորողները հոկտեմբերի 25-ին մասնակցեցին ԱրմՌոբոտիքսի շրջանակում անցկացվող «Գծին հետևող ռոբոտ» ամենամյա մրցույթին:

«Տիեզերք» ակումբի ենթակայքում ստեղծվել է աստղագիտական ֆիլմադարան, կազմակերպվում են ֆիլմերի առցանց քննարկումներ: Բնագիտական-տեխնիկան ուղղվածության ակումբները միավորվել են նորաստեղծ Հանրակրթական տեխնոպարկում:

Կրթահամալիրի սովորողներն ու դասավանդողները մասնակցել են Երևանի համերգասրահներում կազմակերպված համերգների, որոնց անդրադարձել են հանրապետական ԶԼՄ-ները (տես՝ Դահլիճը հոտնկայս երգում էր Կոմիտաս, Ազգ, նոյեմբերի 2), ձմեռային ճամբարի ծրագրով այցելել են թատրոններ: Կրթահամալիրի երաժշտասեր սովորողները կրթահամալիրում հանդիպել են երգահան Ռոբերտ Ամիրխանյանի հետ. հանդիպումը լուսաբանվել է mskh.am-ում և հանրապետական լրատվականներում:

«Լուսաստղ», Info.mskh ակումբների սովորողները մասնակցել են «Ուլիսես-2» պատմվածքի մրցույթին, հանրային լրագրության ակումբի աշխատանքներին, հաղորդումների տարբեր հեռուստա-ռադիոընկերություններում: Գիտակների ակումբը մասնակցել է ԵՊՀ-ում պատմության օլիմպիադային, «Հայոց հարց» հաղորդաշարի առանձին հաղորդումների նկարահանմանը, ՀԱԵՄ ՀԿ-ի միջոցով՝ «Միջմշակութային ուսուցումը, մարդու իրավունքներն ու հանդուրժողականությունը հանուն խաղաղության» միջազգային նախագծին, «Երկիր մեդիա» ՀԸ «Զարթոնքի սերունդ» մրցաշարին:

Մշակվում են 2013թ. իրականացվող ամենամյա 3-րդ միջազգային էկոտուրի, Հայաստանյան տիեզերական ամենամյա 1-ին ճամբարի նախագծերը. սկսվել է ՆԱՍԱԱ-ի միջազգային տիեզերագիտական ճամբարի մասնակցության նախապատրաստական աշխատանքը:

Կրթահամալիրի սովորողները և աշխատողները մասնակցել են «Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում կազմակերպված Բյուրականյան կոնֆերանսին, գրքերի բազմազան շնորհանդեսների:

14. Սովորողների և դասավանդողների ներհայաստանյան և միջազգային փոխանակման ծրագրերի, պարբերական առցանց քննարկումների, հետազոտող ուսուցիչների ամենամյա մայիսյան, հոկտեմբերյան ստեղծագործական, բաց հավաքների կազմակերպում: Մեդիատեխնոլոգիական հանրակրթության գործընկեր դպրոցների ցանցի, այդ դպրոցների համար ուսումնական փաթեթի ստեղծում, ղեկավարների և դասավանդողների վերապատրաստում

Օգտագործելով հեղինակային մանկավարժության աշնանային հավաքի փորձը՝ Սեբաստացու օրեր տոնին Գեղարվեստի ավագ դպրոցի սովորողները Գյումրիում մասնակից են դարձրել Գյումրիի թ. 3 ավագ դպրոցին: Կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագրին, պատանեկան ակումբների և գրադարանի աշխատանքին ծանոթանալու համար կրթահամալիր են այցելել Գյումրիի թ. 8 դպրոցի սովորողներն ու ուսուցիչները: «Սեբաստացու օրեր կրթահամալիրում. կրթահամալիրի տոնին» կրթահամալիրում եղել են Մադինայի, Վաղարշապատի, Գանձայի դպրոցների պատվիրակությունները:

Շարունակվում է համագործակցությունը ԼՂՀ ԿԳՆ հետ. կրթահամալիրի մանկավարժական աշխատողները հոկտեմբերի 23-27-ը Արցախում կազմակերպեցին

Ստեփանակերտի և Շուշիի դասվարների վերապատրաստման առաջին փուլը հեղինակային կրթական ծրագրով, նոյեմբերի 22-25-ը կրթահամալիրում՝ 2-րդ փուլը: Վերապատրաստողների և վերապատրաստվողների միջև շարունակվում է հեռավար համագործակցությունը, արդյունքները կներկայացվեն Հանրակրթական Դիջիթեք 2013-ին, հեղինակային մանկավարժության հեղինակների ամենամյա ստեղծագործական հավաքին: Կրթահամալիրի գեղարվեստի ավագ դպրոցի սովորողների, ուսուցիչների խումբը Շուշիում դեկտեմբերի 15-ին մասնակցել է Խ. Աբովյանի անվան դպրոցի տոնին: Շուշեցի և կրթահամալիրցի սովորողները համատեղ նախագծեր կներկայացնեն Դիջիթեքին: Գարնանը նախատեսվում է «Մշակութային Շուշի» համատեղ նախագծի իրականացումը, որին նախապես մասնակցության ցանկություն է հայտնել նաև Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանի տնօրինությունը:

Վայոց ձորի մարզպետի և կրթության վարչության աջակցությամբ սահմանամերձ գյուղերի դպրոցների հետ մշակվում է գյուղական մոդել դպրոցի նախագիծ: Այդ նպատակով կազմակերպվել են հանդիպումներ մարզում և կրթահամալիրում, կրթահամալիրի դասավանդողներն իրականացել են 3-օրյա վերապատրաստում Խնձորուտի դպրոցում. դասընթացին մասնակցել են նաև Մարտիրոս, Բարձրունի գյուղերի հիմնական դպրոցների ուսուցիչները:

Կրթահամալիրի հիմնական դպրոցները գործընկերային կապ են հաստատել Արագածոտնի մարզի Աշտարակի Պ. Պռոշյանի անվան և Ս.Շահազիզի անվան դպրոցների հետ. կազմակերպվել են միասնական ուսումնական պարապմունքներ Աշտարակի դպրոցներում և կրթահամալիրում:

Հանրակրթական Դիջիթեք 2013-ը ներկայացնելու նպատակով կրթահամալիրի սովորողները ձմեռային ճամբարի ընթացքում եղել են երևանյան և երևանամերձ քաղաքների, գյուղերի շատ դպրոցներում:

Կրթահամալիրի աշխատողները մասնակցել են հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, կլոր սեղանների, այդ թվում՝ «Սոցիալական աշխատանքի տեսություն, կրթությունն ու պրակտիկան արդի բարեփոխումների համատեքստում» համաժողով, «Գնահատման գործիքներ տարրական դասարաններում գրաճանաչության արդյունավետ դասավանդման նպատակով» ծրագրի շնորհանդես, “Россотрудничество” դաշնային գործակալության կողմից կազմակերպվող ռուսաց լեզվի ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթաց Պետերբուրգում: Կրթահամալիրի դասավանդողը ռուսաստանյան ուսումնա-մեթոդական կենտրոնում ընդգրկված է հանրապետության ռուսերենի ուսուցիչների վերապատրաստման ծրագրում, որտեղ շաբաթական սեմինարներում փոխանցում է մեդիահանրակրթության կազմակերպման հմտություններ, ներկայացնում է փորձը:

Կրթահամալիրի արհեստակցական միությունը նամակագրական կապեր է հաստատում եվրոպական արհեստակցական և ուսուցչաց միությունների հետ, 2013-ին կմշակվեն նորվեգացի ուսուցիչների հետ համագործակցության նախագծեր:

15. Աջակցություն կրթահամալիրի՝ որպես մեդիահանրակրթության և տեխնոլոգիական կրթության այլընտրանքային (հեղինակային) արդյունավետ համակարգի պահպանությանը (մանկավարժության կենտրոն և մանկավարժական էլեկտրոնային «Դպիր» պարբերական, ուսումնական կայք (այդ թվում՝ ինտերնետային TV, ինտերնետ ռադիո, թարգմանչական լրատվական գործակալություն, Վիքիպեդիայի խմբագրություն), մեդիագրադարան, մեդիահրատարակչատուն, մեդիատպագրություն

Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին mskh.am-ը պահպանել է իր առաջատար դիրքը հայկական կրթական և գիտական վեբ կայքերի մեջ՝ օրական ունենալով 3000-5000 և ավելի այցելու: Ստեղծվել է մեկ նոր ենթակայք, հրապարակվել են «Դպիր» էլեկտրոնային ամսագրի 63-64-րդ համարները, «Լուսատող», «Պարտեզ» ամսագրերը ավելացրել են իրենց բաժինները: TV mskh-ը թողարկել է 47 հաղորդում: Մեդիահրատարկչությունը թվայնացրել է մոտ 53 կտոր ուսումնական գրականություն՝ դասագիրք, մեթոդական, գիտահանրամատչելի, գիտաֆանտաստիկ, գեղարվեստական ստեղծագործություններ, հրապարակել այլոց կողմից թվայնացված ուսումնական գրականություն՝ մոտ 100 գիրք, ուսումնական նյութեր, այդ թվում՝ աուդիո-տեսանյութեր:

16. Աջակցություն կրթահամալիրում իրականացվող նախադպրոցական այլընտրանքային կրթության ծրագրին. 2-3, 3-4, 4-5 տարեկան երեխաների նախակրթարանային խմբերի պահպանում, 2007թ. ծնված երեխաների՝ կրթահամալիրի կրտսեր դպրոցին նախապատրաստական ուսուցման կազմակերպում, հանրապետության նախադպրոցական հաստատությունների ղեկավար և մանկավարժական աշխատողների վերապատրաստում, ծրագրային նյութերի և վերապատրաստման մոդուլների հրատարակում, ՀՀ ԿԳՆ սահմանած կարգով ներկայացում, «Պարտեզ» էլեկտրոնային կայքի պահպանում

Ձմռան ամիսներին կրթահամալիրի նախակրթարաններում կազմակերպվում են ձմեռային պարտեզները:

Հաշվետու շրջանում կրթահամալիրի նախակրթարաններում սահմանված կարգով գործել են 8 խմբեր, որտեղ հաճախում է 2-4 տարեկան 192 սան, 5 տարեկանների ուսուցման չորս խմբեր (95 սովորող): Նախակրթարանների սաներն իրենց ուսումնական նախագծերով մասնակցել են կրթահամալիրի տոնին, ամանորյա տոնակատարություններին: Լրամշակվել են սաների բնագիտական, մաթեմատիկական, տեխնոլոգիական, լեզվական ընկալումների և հմտությունների զարգացման նոր նախագծեր («Լավաշթխիկ», «Ատամիատիկ» և այլ), շարունակվել է «Իմ ծառը պարտեզում» նախագիծը: Նախակրթարանների դաստիարակներն ունեն իրենց (խմբերի) բլոգները, որոնք հասանելի են սաների ծնողներին: «Պարտեզ» ամսագրում մշակվում է իրականացվում է 0-2 տարեկանների զարգացման ծրագիրը:

Ծրագրի ընթացքին և առկա արդյունքներին մանրամասն կարող եք ծանոթանալ mskh.am-ում և ենթակայքերում:

Կրթահամալիրի տնօրեն՝ Ա. Բլեյան

Ծրագրերի կենտրոնի ղեկավար՝ Ս. Մարկոսյան